ՀԻԱՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» օրաթերթի հավելված

1991 թ. Ապրիլ: № 22: Գինը՝ 50 կոպ.

ՖԻՐՖ—ԱԼԲՈՄ

«Հայաստան, դեկտեմբեր, 88»

«Հայաստան» հրատարակչությունը, մոսկովյան «Մոլորակ» հրատարակչության օգնությամբ 50 հազար տպաքանակով հրատարակեց երկրաշարժի տարեգրությանը վերաբերող «Հայաստան, դեկտեմբեր, 88» գիրք-ալբոմը, որ յուրատեսակ տեղեկատու է: 560 էջանոց այս գիրք-ալբոմը, որ տպված է պոլիգրաֆիկական բարձր մակարդակով, կավճային բնտիր թղթով, ընդգրկում է տարերային աղետին վերաբերող արժեքավոր վավերագրեր, կենտրոնական և հանրապետական թերթերում տեղական և արտասահմանյան թղթակիցների հարցազրույցներ, ուսումնասիրություններ, լրատվություններ և այլ նյութեր, բազմաթիվ լուսանկարներ:

Շարադրանքը ներկայացված է խոսքն յոթ գլուխներում. «Ճարաղետ ժամը», «Ժամանակի մասշտաբները», «Էպիկենտրոն», «Երկրի և մոլորակի օգնությունը», «Ինչ են ասում սեյսմոլոգները», «Վիշտ և հույս», «Վերականգնման քայլերը»:

Գիրք-ալբոմը բացվում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի առաջաբանով: Ժողովածուն կազմել են Լյուդմիլա Գրիգորովան, Անուշ Գասպարյանը, Լևոն Մանուկյանը՝ մամուլի հնագույն աշխատող, մշակույթի վաստակավոր աշխատող Բենգազ Ղուկասյանի նախաձեռնությամբ ու մասնակցությամբ:

ՇԻՐԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Համբուրիր հողը Գյումրի քաղաքի...

Գյումրի մտնելիս.—
Համբուրիր հողը,
Համբույրով քայլիր այս հողի վրա...
Այս հողը հող չէ մի սովորական,
Այս հողը կյանք է շատ ողբերգական...
Գյումրի մտնելիս՝ խաչ հան երեսիդ,
Ապա խոնարհվիր համբուրիր հողը,
Ինչպես Ցոր-Վերքի դուռն են համբուրում ու պատերը սև,
Որ խոստանում են մատաղն հիվանդի
փրկության համար...

Այս հողը հող չէ...
Այս հողը հող չէ մի սովորական,
Այս հողը ցավն է մեր հավերժական...
Գյումրի մտնելիս.—
Համբուրիր հողը,
Զգույշ դիր ոտդ այս հողի վրա,
Եվ զգուշացիր մխիթարանքի խոսքեր ասելուց...
Խոնարհվիր խոնարհ, համբուրիր հողը...

Եվ հազար-հազար աչքեր մանկական,
Քո աչքերի մեջ կնայեն արտում,
Եվ հազար-հազար ձեռքեր մանկական,
Քո թույլ ձեռքերից կկառչեն ամուր,
Եվ հազար-հազար ոտքեր մանկական,
Կաղմկեն հանկարծ քո շուրջը մեկից,
Եվ հազար-հազար ձայներ մանկական,
Կկանչեն լացով խեղճ մայրիկներին,
Եվ հազար-հազար նիշեր մանկական,
Կկանչեն նիշով լուռ հայրիկներին,
Եվ հազար-հազար երգեր մանկական,
Կենչեն զվարթ ու կկարկաչեն,
Եվ հազար-հազար հայացք մանկական,
Քո քար հայացքից ամուր կկառչեն,
Եվ հազար-հազար խաչեր մանկական,
Խաչված կխաչվեն քո աչքերի մեջ,
Եվ քեզ ու իրենց Հիսուսի նման
Խաչերի վրա կտանջեն անվերջ...
Եվ քո աչքերի սև շրջանակում
Ինչպես որ հոգու լուսանկարից,
Հարազատներին ու անցորդներին՝
Կժպտան մանուկ ՄԱՅՐԱՄԻԿՆԵՐԸ,
Կժպտան մանուկ ՔՐԻՍՏՈՍՆԵՐԸ,
Բոլոր-բոլորը...
Եվ հազար-հազար դեմքեր մանկական՝
Դուրս կգան հողից քո դեմ կկանգնեն
Եվ հազար-հազար բառեր քեզ կասեն...
Իսկ դու ոչ մի բառ չես գտնի ասել,
Իսկ դու՝ կկանգնես շվար ու շփոթ,
Ու դու քեզ կզգաս գերեզմանի մեջ,
Գերեզմանի մեջ՝ առանց դագաղի,
Գերեզմանի մեջ՝ ոտքի տակ ընկած...
Այս հողը հող չէ մի սովորական,
Այս հողը ճաքած սիրտ է հայկական,
Դե, թե սիրտ ունես շոշափիր հիմա,
Թե սիրող սիրտ է՝ կանգնած կլինի...
Խոնարհվիր խոնարհ,
Համբուրիր հողը Գյումրի քաղաքի՝
Եվ հող կդառնաս այս հողի վրա...
... Չոր չբխկում են բաժակները օղու՝
«Գյումրի» կոչեցյալ այս սև գինետան
Սև կամարների ու պատերի տակ...
Եվ դուդուկները մղկտում են տամ.—
Շերամ է, Զիվան, սուգ է ու շիվան,
Շուրջը մատաղված մի ամբողջ քաղաք...
Դե, խմիր, եթե կարող ես խմել,
Դե, հարբիր, եթե կարող ես հարբել,
Արտասվիր, եթե արցունքներ ունես,
Հայհոյիր, եթե հայհոյանք դեռ կա...
Ցոր-Վերքը անա — դիմացը տխուր՝
Ամենափրկիչի ավերակները,
Ավերակների վրա թևածող
Աղավնիների երամը ճերմակ՝
Հրեշտակների թևերով ճերմակ,
Թևերի վրա խաչեր նկարված,
Թևերի վրա անունները գրված,
Խաչված թևերով, խաչված բոիշքով,

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

Երկու լուսանկար 1926 թ. երկրաշարժի օրերից

Երկրաշարժը Շիրակի մեր լեռնաշխարհում անակնկալ չէր։ Դարեր են աղմկել լեռնապարերի տակ, դաժան ցնցումներով ու աղմուկով են աշխարհ եկել մեզ շրջապատող լեռները և այստեղ բնակվող մարդկությունը ժամանակ առ ժամանակ, կամա թե ակամա եղել է այդ արհավիրքների գլխավոր հերոսն ու ականատեսը, տուժվողն ու փրկվողը։

Լուսանկարներում դուք տեսնում եք երկու կադր 1926 թվականի երկրաշարժի օրերից։ Մի տեղ, քանդված հյուղակների և վրանի հարևանության մանուկ ու պատանի աղեղչաների օգնության հերթում պատկերված շարքն է, մյուսում՝ օգնության եկած հարևանների խումբը։

ԴՐԻԳՈՐՅԱՆ
ՄԵԼԱՆԻԱ ԱՍԱՏՈՒ

Պատմում է մայրը

Մեվել է 1972 թվականի մայիսի 9-ին, Լենինականում։ Սովորում էր 9-րդ դրպրոցի 10-րդ «Ա» դասարանում։

Շատ տասներորդ դասարանցիների նման նա նույնպես չլսեց վերջին զանգը, որքան երազանքներ մնացին այդ փլատակների տակ։

Երկրաշարժից մեկ օր առաջ էր, երկար նստեցինք Մելանիայիս հետ։ Զրուցում էր և չէր ուզում ընել, պատմում, խոսում էր իր երազանքների մասին, որ դպրոցն ավարտելուց հետո ուր պետք է գնար սովորելու։ Նա դասերը բարեխղճորեն պատրաստելուց հետո շատ էր սիրում զբաղվել ձեռքի աշխատանքով։ Ձեռքի արագ և ճիշտ շարժումներով այնպիսի ծաղիկներ էր պատրաստում, որ ինչ էր տարբերվում բնականից։

Դեկտեմբերի 7-ի առավոտյան մի փոքր վատառողջ էր։ Ու չնայելով մեր ու տատիկի հորդորներին, որ չգնա դպրոց, նա չհամաձայնվեց։

Այդ օրը ավելի աշխույժով, քան մյուս օրերին, սկսեց պատրաստվել՝ հագավ դպրոցական համազգեստը, սանրեց գանգուր մազերը և կապեց սպիտակ ժապավենը։ Այդ առավոտ ավելի էր գեղեցկացել, երկնագույն աչքերում ինչպես միշտ բարի ժպիտ էր։ Տատիկը ուրախությունը չթաքցնելով նկատեց՝ Նանի ջան (Մելանիայիս տանը այդպես էին կանչում), ոնց որ թռչնակ լինես։ Այդ պահին ոչ մեկս էլ չգիտեինք, որ թռչնակի նման մեր ձեռքից պետք է թռչի, գնա։

Համբուրիր հողը Գյումրի քաղաքի...

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

Խաչված երամով թևածում են լուռ,
Խաչված թևերին մայրական մրմուռ,
Խաչված երամով թևածում են լուռ՝
Հոգիների պես մեր բալիկների
Փլատակներին ավերակների...
Գյումրի, ա՜խ, Գյումրի...
Երկինքդ կապույտ-կապույտ պատարագ,
Եվ աստվածային այդ կապույտի մեջ՝
Լուռ թևածում է հրեշտակներիդ երամը ճերմակ...
Իմ բնկերուհի—
Ես քեզ նայում եմ հիմա երկնքից,
Նայիր թևածող աղավնիների ճերմակ երամին—
Ես նրանց մեջ եմ,
Ես նրանց մեջ եմ, ես արդեն չկամ,
Մի որոնի ինձ, մի մնա մենակ,
Մի դարձրու սիրտս վանքը ավերակ—
Մարիենի վանքը...
Իմ բնկերուհի—
Ես քեզ նայում եմ հիմա երկնքից,
Մի որոնի ինձ—
Դու էլ չես գտնի նախկին Շիրակին,
Այա արդեն չկա ու էլ չի լինի,
Սև դեկտեմբերը թաղել է նրան առանց դագաղի՝
Այն հազար-հազար մանկիկների պես,
Այն հազար-հազար ծաղիկների պես...
Զարենցի նման նա շիրիմ չունի ու չի ունենա,
Ոչ ոք չգիտի ապրում է արդյոք, թե թաղված է նա՝
Այն հազար-հազար գերեզմաններում Գյումրի քաղաքի,
Առանց անունի ու հիշատակի...
Մի փնտրիր իզուր դու այն Շիրակին,
Այն լավ Շիրակին, որ հիմա չկա.—
Սև ու սգավոր դեկտեմբեր է նա,
Սև սիլուետ է նա Երևանում,
Որ լուռ ու մռայլ ամեն առավոտ
Կանգնում է մի պահ Զարենցի տան մոտ՝
Հանճարեղ ցավով ու տառապանքով...
Իմ բնկերուհի — Քո աչքերի պես,
Լուսանկար են բոլոր աչքերը Գյումրի քաղաքում՝
Ավերակների պատերից կախված...
Ու դու լսում ես քո ականջներում
Զայները նրանց...
Եվ դու փողոցում արդեն խենթացած,
Ճչում ես հանկարծ,
Երբ որ քո դիմաց տեսիլքն է կանգնում՝
Մեր Մելանիկի պատկերով զուլաա...
Այդպես շրջում ես ավերակներում
Ու որոնում ես գտնելու հույսով՝
Ա՜խ, նրանց-նրանց, որ արդեն չկան,
Որ քո աչքերում դարձել են հիմա լուռ լուսանկար,
Եվ քո աչքերի սև շրջանակից
Ժպտում են տխուր ու անկարեկից,
Հարազատներին ու անցորդներին...
Գյումրի մտնելիս,
Համբուրիր հողը Գյումրի քաղաքի,
Համբույրով քայլիր այս հողի վրա
Զգույշ դիր ոտքդ այս հողի վրա
Եվ զգուշացիր մխիթարանքի խոսքեր ասելուց.—
Այս հողը հող չէ մի սովորական,
Ողբերգություն է դարձել հայկական...

Լուսանկարը՝ Հ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ

ԿԱՆԽԱՋԳԱՑՈՒՄ

ՄԻՏԻՆՅԱՆ ՄԱՆԻԿ ԴԱՎԹԻ

«Էռանկյունի» թաղամասը գեղեցիկ դարձավ հազարավոր բնակիչների համար: Սրտի ինչպիսի՞ թրթիռով էին մարդիկ բնակարանամուտ տոնել, ինչպիսի՞ ճաշակով էին դասավորել կահույքը, այլ իրեր...

Իմ սիրելի, խեղճ քույրիկ: Բարի ու դյուրազգաց, նուրբ հումորով ու քնքուշ, փոքրամարմին ու սևաչյա: Դու վեր ջին ժամանակներս տխուր էիր, խոսում էիր մահվան մասին, իսկ մենք սրամտում էինք...

Ի՞նչ իմանայինք, որ քեզ խոսեցնում էր մի գերբնական ուժ: Դու կանխազգում էիր, որ ինչ-որ բան էր լինելու: Մոտավորապես նոյեմբերի սկզբին էր, մի անգամ ասացիր. «Այլ, կը-տեսնեք, ես անպայման կը-մեռնեմ, ուզում եմ իմ երեխա ներն էլ ինձ հետ լինեն...»:

Նա իր «խոսքի տերն» եղավ: 35-ամյա Մանիկին 18-րդ օրը գտան 12 հարկանի շենքի 4-րդ հարկի իրենց բնակարանի միջանցքում, երկու երեխաներին՝ չորսամյա ԳՈՌԻԿԻՆ և երեքամյա ՊԵՐՃՈՒՀՈՒՆ հավերժ գրկած...

***

ՄԻՏԻՆՅԱՆ ԴԱՎԻԹ ՄԱՆԱՍԻ

Քաղաքի արհեստավորների շրջանում հայտնի էր «ուստա Դավիթ» անվամբ: Դարբինների վարպետն էր: Նրա բազկի ուժով էին կյանք առել շատ շինությունների երկաթե նախշերը, ֆայտոնները:

Մանկությունը դառն է եղել: Վեց տարեկանից զբաղվելով հորից, իր ուսերին է վերցրել ընտանիքի հոգսը: Եվ աշխատել է ու աշխատել: Մասնակցել է երկրորդ համաշխարհային պատերազմին, գերի ընկել, փախել հա մակենտրոնացման ճամբարից վիրավոր ընկերոջը շալակած անցել Ալբանիայի սարերը, եղել պարտիզան, օրերով մնացել առանց ջրի ու հացի...

Այս ամենը մնացել էին անցյալում, և թվում էր, թե վարպետ Դավիթը պետք է վայելեր վաստակած հանգիստը, ուրախանար թոռնիկների թոթովանքներով, երեխաների հաջողություններով: Սակայն մահաբեր երկրաշարժը չխնայեց շատերին, զոհվեց նաև Դավիթ Միտինյանը, և չիմացավ, որ զոհվել են նաև միակ որդին և փոքր աղջիկը՝ իր լուսաշվի երկու երեխաների հետ:

ՄԻՏԻՆՅԱՆ ՍԱՇԻԿ ԴԱՎԹԻ

Դանոթները տեսնելով Սաշիկի լուսանկարը, կտխրեն՝ ժպտալով: Այո, հենց այդպես. ժպտալով լաց կլինեն: Նա այն տիպիկ լենինականցիներից էր, որի «գրպանում» պատրաստի հումոր ու սրամը տություն կար: Բնավորությամբ լինելով բարի, անկեղծ, անմի ջական, նա այն հազվագյուտ մարդկանցից էր, որ ամեն րոպե պատրաստ էր օգնել ընկերներին, ընդառաջել նրանց և կարիքը հոգալ:

Չկալովի անվան կարի ֆաբրիկայի ձևանոցում առաջինների մեկը ինքն էր եղել «երկրաշարժ է» բղավողը: Նրա բը նածին ճարպկությունն ու արագաշարժությունը եղան նրա զոհվելու պատճառը: Եթե մնար իր տեղում, ոչինչ էլ չէր լինի: Նա զոհվեց՝ փրկելով շատերի կյանքը:

1988 թ. նոյեմբերի 14-ին Սաշիկի 50-ամյակն էր: Մեր շնորհավորանքներից հետո, նա վերցրեց իր բաժակը և իրեն ոչ բնորոշ թախծոտությամբ ասաց. «Արդեն 50 տա րեկան եմ, 2 ամսվա պապիկ, կյանքիս կեսից շատը ապրել եմ, սրանից հետո ինչ լինելու է, թող լինի...»:

Եվ եղավ աղետալի դեկտեմբերի 7-ը...

***

Մեր հարազատների մասին տվյալներ տալով, հիմնականում ցանկացել ենք ընդգծել այն, որ յուրաքանչյուրն էլ յուրովի կանխազգացել էր արհա վիրքը: Մենք ամեն կերպ աշխատում էինք փարատել նրանց ծանր մտքերը, բայց մեզ չհաջողվեց այդ, և կորցրինք ինչ ծանրությունը իջավ մեր հոգուն:

Այս հինգ անմեղ զոհերը՝ մի գերդաստանից էին: Նրանց ցավալի մահը մշտապես կմխա հարազատների և ծանոթների սրտերում մինչև իրենց կյանքի վերջը...

ԳԱԼՅԱ, ԷՄՄԱ, ԱՆՅԱ, ԿԱՐԻՆԵ ՄԻՏԻՆՅԱՆՆԵՐ

ՄԱՑՐ ՈՒ ԱՂՋԻԿ

Նկարից մեզ են նայում մայր ու աղջիկ ՀԱԿՈԲՅԱՆ ՍՈՖՅԱՆ և ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻՆ (ծնվ. են 1954 և 1979 թթ.): Իր ապրած կյանքի ընթացքում Սոֆյան սովորեց և ավարտեց միջնակարգը № 20 դպրոցում, ընդունվեց տեխնիկում, ամուսնացավ, ունեցավ սիրասուն այս աղջնակին, որը հասցրեց № 2 դպրոցում ընդամենը երեք տարի սովորել, զբաղվեց սպորտով:

Մայրը՝ Սոֆյան, սիրում էր պոեզիան և երաժշտությունը: Կարդում էր հատկապես Պարույր Սևակի ստեղծագործությունները: Կյանքում կատակասեր էր, լիաթոք ծիծաղել գիտեր և հումորի զգացում ուներ:

Սոֆյան նույնիսկ չիմացավ, որ մայրը՝ Էլիզան, ուղիղ մեկ շաբաթ առաջ երազ էր տեսել և հանգուցյալ հայրը ասել էր, որ մեկ շաբաթ հետո «գալիս» կգա նրա գլխին:

Ու... Արհավիրքն եկավ. անմեղ զոհերն իրենց չապրած կյանքը նվիրեցին մնացածներին ու գնացին: Հավերժ հիշատակ նրանց՝ հանդերձյալ կյանքում:

ԼՈՒԻԶԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ԿԱՐԼԵՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ ծնվել է Լենինականում, սովորել Ղարիբջանյանի անվան դպրոցում, միաժամանակ հաճախել № 2 երաժշտական դպրոցը։ Առաջավոր լինելով բոլոր առարկաներից, նա մասնագիտություն ընտրեց երաժշտությունը, ավարտելով Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանը, ապա մանկավարժական ինստիտուտի համապատասխան ֆակուլտետը՝ առաջին կարգի դիպլոմով։

Գեղեցիկ էր Մարինեն, բարեկիրթ և ամենքի կողմից սիրված։

Նրան հաջողվում էր իր շուրջը ներդաշնակ, իր հոգուն համանվագ միջավայր ստեղծել։ Այդպիսի մի սուրբ ընտանիք էր նրա երիտասարդ օջախը։ Ընտանիք՝ լի երազներով, երեխաների ուրախ ծլվլոցով, երաժշտության մեղեդիներով։

Մարինե Համբարձումյանին բարձր էին գնահատում աշխատանքային կոլեկտիվը, աշակերտները, ընկերները։ Նրա համեստությունն ու պարկեշտությունը, նրբանկատությունը շարունակում էին ճաճանչարհ բաց անել դեպի մարդկանց սրտերը։

Երկրաշարժը գերեզման տարավ այս ընտանիքի անդամների մեծ մասին։ Լռեց Մարինեի դաշնամուրը։ Երկրաշարժի դժոխային աղմուկը լռեցրեց մի ողջ ընտանիքի կենաց երաժշտությունը։

ՏԻԳՐԱՆ ՊԱՐԳԵՎԻ ՉՈԼԱԽՅԱՆԸ ծնվեց 1986 թվականին, Լենինականում։ Նա ծնողների առաջին զավակն էր, առաջին երջանկությունը։ Ի՜նչ հույսեր էր կապում Մարինե Համբարձումյանը իր որդու հետ։ Նա մտքում Տիգրանին տեսնում էր գաշնամուրի մոտ նստած։ Տիգրանը ժամանակի ծնունդ էր։ Նրա առաջին թոթովանքների մեջ ծնվեց առաջին ոտանավորը՝ «Ղարաբաղը մերն է»։

Դեկտեմբերի 7-ին, ողբերգական այդ վայրկյաններին նրանք գտնվում էին տանը։ Զոհվեցին Տիգրանիկը, մայրը, Ռիմա տատիկը և աշխատանքի վայրում՝ Գոհարիկ հորաքույրը։

ԳՈՀԱՐԻԿ ՍԵՐԳԵՅԻ ՉՈԼԱԽՅԱՆԸ ծնվել է 1959 թվականին։ 1982 թվականին ավարտեց ԵրՊԻ-ի Լենինականի մասնաճյուղի քաղաքացիական շինարարության ֆակուլտետը։ Աշխատում էր № 4 նախագծային արվեստանոցում։

...Իմ մտքի աչքով տեսնում եմ Գոհարիկին։ Մենք աշխատում էինք նույն շենքում։ Ծանոթացել էի նրա հետ ծննդյան մի օր, մի հավաքատեղիում։ Աչքերիս առաջ է մեջքին թափված նրա հարթ, երկար ու մետաքսյա մազերի ծփանքը։ Իջնում էր հաճախ վերևի հարկից՝ ճարտարապետներին պատկանող հարկաժնից ու ես ընդհատելով նյութերի ընթերցումը, սիրով զրուցում էի Գոհարիկի հետ։ Լավն էր Գոհարիկը, կանոնավոր դիմագծերով, սպիտակ, նուրբ մաշկով, հանդարտ, ցածր ձայնով։ Մասնագիտությամբ շինարար էր, բայց սիրում էր երաժշտությունը։ Ընկերների սիրելին էր, համակ նազանք ու քնքշություն։ Զոհվեց գրողների, նկարիչների, լրագրողների և իր գործընկեր ճարտարապետների մի մեծ խմբի հետ, փլված շենքում և մեկից աղքատացավ կործանվող մեր քաղաքը։

ՀՈՒՓՍԻՄԵ ԱԼԵՔՍԱՆԻ ՉՈԼԱԽՅԱՆԸ ծնվել է 1926 թվականին, Լենինականում։ 1943 թվականին ավարտում է միջնակարգ դպրոցը, ընդունվում մանկավարժական ինստիտուտ։ Տնտեսական ծանր պայմանները, սակայն, թույլ չտվեցին շարունակելու ուսումը։ Աշխատանքի ընդունվելու դիմումով Հռիփսիմեն ներկայացավ տեքստիլ կոմբինատի տնօրինությանը։ Եվ տեքստիլ լաստագործների մեջ ամբողջ կյանքում։ Մինչև կենսաթոշակի անցնելը աշխատեց այս ձեռնարկությունում որպես հաշվապահ։ Զորս երեխաներ դաստիարակեց, մեծացրեց, որոնք բոլորն էլ ստացան բարձրագույն կրթություն, ամուսնացան, թոռնիկներ և երջանկություն պարգևելով ատին։

Հանրապետության վաստակավոր դերասան Սերգեյ Զոլախյանի և Հռիփսիմեի ընտանիքը մինչև աղետը բնակվում էր որդու ընտանիքի հետ միասին, մի հարկի տակ։ Երջանկության այդ մեծ տունը ավերվեց մի քանի վայրկյանում և աղետից յոթ օր անց գտնվեցին Հռիփսիմեն, Մարինեն, Տիգրանիկը, իսկ նախագծային ինստիտուտում՝ նաև Գոհարիկը։

ՏԻԳՐԱՆ ՍԵՐԳԵՅԻ ՌՈՒՇԱՆՅԱՆ

1971 թվականի մայիսի 3-ին բարձր տրամադրության մեջ էր Ռուշանյանների ընտանիքը. ծնվել էր անդրանիկ արու զավակը՝ Տիգրանը, որի մանկական շունչը համաձուն էր ծնողների զարկերակին ու նրանց հոգին լցնում էր խնդությամբ։ Տիգրանի մեծանալու հետ տարեցտարի ձևավորվում էր էությունը, որն ամբողջովին եռանդ էր ու էներգիա։

Տիգրանն աշխույժ էր չափից շատ և ուներ ոիթմի մեծ զգացողություն։ Դեռ 3 տարեկան հանակում դիոլը ձեռքին կարող էր հմայել շրջապատին իր կատարողականով։ Անցան տարիներ, մանկապարտեզն ու դպրոցը միմյանց հաջորդեցին, որոնցում նույնպես դրսևորվեցին Տիգրանի փայլուն ունակությունները։ 1988-ին էր, բարձր առաջադիմությամբ ավարտեց դպրոցը և նույն տարում էլ ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղի տրիկոտաժի ֆակուլտետը։

Եվ այդ նույն տարում էլ, դեկտեմբերյան այդ շարագույժ օրը հազարների հետ նրա դին էլ ճզմվեց պոլիտեխնիկականի փլատակների տակ՝ ծնողների, հարազատների և շրջապատի մեջ թողնելով արտահայտիչ աչքերի խինդն ու ծաղիկ հասակը։

ԳՈՀԱՐ ՍՄԲԱՏԻ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ Կումայրի) 1920 թվականին։ Ավարտել է Լենինականի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը։ Իր երկ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի հառասուն երկու տարի, մինչև չարաղետ երկրաշարժի օրը, աշխատեց Ավ. Խաչակյանի անվան № 26 դպրոցում։

Զուցակիցներին հմայում էր իր աշխույժ, համ ու հոտով պատմելու ձևով։ Այդպես էին նաև նրա վարած դասերը, որոնք միշտ մրնում էին շարունակելի, որոնցով ոգևորվում ու ոգեվորում էր։ Նա տիրապետում էր գեղեցիկ խոսքի արվեստին։ Դպրությանը սիրահարված նվիրյալ էր, համակ եռանդ, նորը յուրացնելու անսպառ երևակայությամբ։ Այս շնորհները նրան առաջնորդեցին դեպի ուսուցիչների առաջին համագումար, որտեղից վերադարձավ «Պատվո նշան» շքանշանով։ Նրա պարգևատրումների լուսավոր ուղին շարունակվեց։ Արժանացավ «Ժողովրդական կրթության գերազանցիկ», «Ավագ ուսուցիչ» կոչումների, պարգևատրվեց բազում պատվոգրերով, անուրջ գրվեց Լենինականի ժողկրթբաժնի պատվոգրքում։ Մայրենիի անխոնջ մշակը փառքով ու պատվով վայելեց ուսուցիչ կոչումը, որը Գոհար Ղումաշյանի դավանանքն էր, որին անդավանան մնաց մինչև իր ողբերգական մահը։

ԱՐՄԱՆ ՅՈՒՐԱՅԻ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Ծնվել է 1978 թվականի մայիսի մեկին՝ Լենինականում։ Սովորում էր № 2 դպրոցի 4-րդ դասարանում։

Սև նակատագիրը չխնայեց գեղեցկատես, խելացի ու շրջահայաց Արմանին...

Զարաղետ օրվանից մեկ օր առաջ իր այնքան սիրելի տատիկի ու պապիկի հետ մեկնելու էին Բաթումի՝ հարսանիքի, սակայն հետաձգեցին մեկ օրով։ Այդ օրն Արմանի մայրը խնդրեց երաժշտական դպրոցի ուսուցչուհուն, որպեսզի հնարություններ չուտ վերցնի։ Արմանը հանձնում է հնարությունը և շտապում տուն՝ հարսանիքի մեկնելու պատրաստություն տեսնելու...

Ներս մտնելուն պես վազեց տատիկին հաղորդելու, որ «4» է ստացել, դեռ նոր էր տատիկը նրա նկատին գրոշմել ուրախության համբույրը, երբ տունն օրորվեց։ Արմանը խուճապահար տագնապով նայեց ու վազեց դեպի պատուհանը, և ամենը ինչ կույ գնաց անավոր ցրնցումին...

Անիծվես դու դաժան աղետ, ինչպե՞ս տարար Արմանին և նրա պես կյանքով ու երազներով լեցուն բազմահազար մանչուկների, որոնք ծնողների հոգու սյուներն էին։

ԱՅՍ ԲԱՐԻ ՈՒ ԹԱԽԾՈՒՏ ԱՉՔԵՐՈՎ ՀԱՅՈՒՀԻՆ

Տարերային աղետը չխնայեց նաև այս բարի և թախծոտ աչքերով հայուհուն՝ ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ԿԱՄԱՐՋԱՆԻՆ։ Հնացրեց նշել իր կյանքի քսաներորդ գարունը, որին այնքան արտատրոի սպասում էր։

Ծնվել է 1969 թվականի մայիսի 19-ին։ Ավարտել է Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցը։ Նույն տարում ընդունվել է պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական բաժինը։ Երրորդ կուրսում էր սովորում, երբ անավոր երկրաշարժը փշրեց նրա վառ երազանքները, և իր սև, ծանր ճնշումով ծածկեց նրան։

ՆԱՀԱՊԵՏՅԱՆՆԵՐ

Մայր և որդի. բառերի ասելիքն իրար խոսում է կյանքի մասին, որդիական ու մայրական հավասարը չունեցող սիրո մասին, խոսում է մարդկային երջանկության մասին: Եվ հազվադեպ են եղել, երբ մայրն ու որդին զոհվել են նույն պահին: Եվ այն, ինչ հազվադեպ, եզակի, չլսված կամ չտեսնված էր, պատահեց մեր քաղաքում միաժամանակ շատերի հետ:

Զոհվեցին մայր ու որդի՝ ՆԱԶԻԿ, ԳԵՂԱՄ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՆԵՐԸ, այդ ընտանիքի հարազատ ամենանվիրական անունները: Մայր, որ ծնողն էր ամենքի, որդի, որ ծուխն էր օջախի:

Հայրը՝ Կարուշ Նահապետյանը, 8-9 տարեկանից ճաշակել էր որբության դառնությունն ու զրկանքը: Այդ տարիների սրտահոց հուշերը ընդմիշտ չմոռացվեցին: Կյանքի միակ երազանքը դարձավ կազմել ընտանիք, ունենալ երեխաներ և նրանց այնպես սիրել, այնպես գուրգուրել ու դաստիարակել, ինչից զրկված էր եղել մանուկ հասակում:

—Տուն շինեցինք Նազիկիս հետ, երեք երեխաներ մեծացրեցինք, հետո ճաշակեցինք թոռնիկներ ունենալու ուրախությունը, նրանց քաղցրալուր թոթովանքների ու աղմուկի ներքո շարունակ երիտասարդ ըզգացինք մեզ:

Դեկտեմբերի 7-ը, աղետի հաշված վայրկյանները ընդհատեցին Նահապետյանների ընտանիքի կյանքի բնական ընթացքը:

Գեղամ Նահապետյանը, 32-ամյա երիտասարդ ինժեները, զոհվեց իր աշխատավայրում որբ թողնելով երկու տղաներին, սիրասուն կնոջը:

Մեկ-մեկու անուններ իրենց շուրթերին, նրանք մայր ու որդի հանգան նույն վայրկյանին, միասին:

—Մենակ թողեցիր իմ վըշտերի հետ, Նազիկ, ծանր կորըստից կքված ուսերով: Երշուրթերին, նրանք՝ մայր ու որդի երբ ծնողները օր առաջ են մահանում, չտեսնելով զավակի կորուստ, սրտի կսկիծ: Բայց գոնե ողջ մնայիր դու, Նազիկ, լինեիր կողքիս, որ մեծացնեի Գեղամ որդիներիս, իմ գեղամիկներին: Ամոքեիր վիշտս:

Երկնի խաղաղությունը իջնի ձեր շիրիմներին, սիրելիներս, և թող մխիթարվեն ինձ նման ողջ մնացածները, ամոքվեն ծխացող վերքերը, թող գնացածների մատաղ կյանքերով երկարատև դառնան նրանց մանուկ հետնորդները:

ԹԱՄԱՐԱ ԽԱԺԱԿԻ ՎԱՐԱԺՅԱՆ

1953 թվականին, Լենինականում է ծնվել Թամարան: Սովորել է № 29 մաթեմատիկական բեմումով դպրոցում: Շատ էր սիրում մաթեմատիկան և անգլերեն լեզուն: 1975 թվականին ավարտելով պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարային մասնաճյուղը, որպես գլխավոր ինժեներ աշխատանքի է անցնում Զկաուովի անվան կարի ֆաբրիկայում, այնուհետև տեղափոխվում է գուլպեղենի արտադրական միավորում որպես ռոակի ինժեներ: Թամարան շատ էր սիրում աշխատանքը և հարգանք էր տածում աշխատասեր մարդկանց նկատմամբ:

Թամարան ամբողջովին նվիրված էր իր երկու զավակներին և միշտ երազում էր այն օրը, երբ կտեսնի նրանց լավ մարդ դարձած, բայց, ավաղ, նրա այդ երազանքը մնաց անկատար:

1988-ի դեկտեմբերի 7-ին, երբ աշխատանքի բեղմիզման ժամին Թամարան բշտապ գնացել էր տուն երեխաներին ճաշ պատրաստելու, այս անգամ չհասցրեց: Երբ Թամարային գտան փլատակների տակ, նա կարծես երկինք էր նայում զարմացած աչքերով և ասում՝ «Այս ի՞նչ արիր, Ատոված, ի՞նչ արիր մարդիկ»:

ՆԱԽԱԶԳԱՑՈՒՄ

ՄԱՐԻԱՄ ՄԻՇԱՅԻ ԿԱՐՈՅԱՆ

Ծնվել էր 1975 թ. մարտի 13-ին: Սովորում էր № 2 դպրոցի 7-րդ «Ա» դասարանում, միաժամանակ արվեստի դպրոցի դաշնամուրի բաժնի 6-րդ դասարանում: Զոհվեց դպրոցում...

Ժիր, թովուոն, ծիծաղկոտ աչքերով աղջնակ էր: Լավ էր սովորում թե դպրոցում, թե երաժշտականում: Երազում էր ուսուցչուհի դառնալ (անգլերեն լեզվի), շատ էր սիրում այդ մասնագիտությունը: Ուզում էր ամեն ինչ սովորել, ու անմիջապես էլ տիրապետում էր այն ամենին (գոբելեն, շյուղերով գործել, ասեղնագործել), ինչով սկսում էր զբաղվել: Ժամանակ էր գտնում ու այդ ամենն անում: Գունավոր թելերից ձեռագործ թաշկինակներից է մայրն աղջկա կարոտն ամեն օր առնում:

Ի՞նչ նախազգացում էր Մարիամի մեջ արթնացել, որ երկրաշարժից առաջ անընդհատ, ամեն օր դպրոցից տուն գալով, նվագում և երգում էր «Ադանայի ողբը»: Տանեցիներին ու հարևաններին կանչում էր, թե եկեք, մի քիչ լաց եղեք: Դպրոց գնալուց, բոլոր տանեցիներին համբուրում էր, հետո տանից դուրս գալիս: Ախր շատ էր ժիր ու աշխույժ, ո՞նց մնաց...

ՆՈՅԵՄՋԱՐ ՎԱՇԻՆԿՏՈՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1959 թվականին, քաղաքից ոչ հեռու գտնվող Հացիկ գյուղում, ուր գարնանը մայախիտ էին հագնում լեռնապարերը, ծաղկունք էր սփռվում շուրջը, փթթում էր սպիտակ ու վարդագույն ծաղիկներից Սիմոնի նշանավոր այգին:

1975 թվականին Նոյեմզարը ավարտեց դպրոցը, այնուհետև ամուսնացավ ու ապրեց հայրենի գյուղում՝ ծնելով նոր հացիկցիներ՝ Նարինեին, Դավթին և...

Նա նորից էր մայրացել: Գյուղում ավարտվել էր բեր քահավաքը, սաթերի վրա ամպեր էին կիտվել, մի քանի օր շարունակվում էին տեղումները: Այդ գիշեր ձյուն եկավ ու երկունքի ցավերից տնքաց մայրը: Նրան հասցրեցին Լենինականի ծննդատուն: Ծնվեց որդին: Պատրաստվում էր դուրս գրվել: Հացիկում իրարանցում էր: Տանը պատրաստել էին երեխաներ մեծացրած մանկան հին ու բարի օրորոցը: Բայց չվերադարձավ Նոյեմ մայրիկը, օրորոցի մեջ երեխայի ձայն չլսվեց:

Գոնե միայն 6-րդ օրը ծննդատան փլատակների տակից:

ԳԱՐԵԳԻՆ ԵՆՈՔԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1955 թ., Լենինականում: 1972 թ. ավարտեց № 16 դպրոցը: Փոքր հասակում զրկվել էր մայրական քնքշանքից, ում այնպես սիրում էր: Աշխատում էր Լուկա շինի անվան մանվածքային ֆաբրիկայի նորոգման բաժնում: Կրում էր աշխատանքային ընկերների սերն ու համակրանքը. նա բոլորի Գարենն էր...

Ամուսնացել էր, ուներ 2 դուստր: Ով գիտե, թե ինչ սիրով էր սիրում, երազներ հյուսում նրանց համար: Երկրաշարժի օրը տանն էր, կնոջ և երեխաների հետ: 4 ժամ հետո ԼԻԱՆԱՅԻՆ հանեցին շենքի փլատակների տակից, նա դուրս էր թռել մոր ձեռքերի միջից և զոհվել: Մայրը վնաս վածքով փրկվել էր. երկտակ եղած շենքից: Գարեգինին ու մյուս աղջկան՝ ԼՈՒՍԻՆԵԻՆ շտապոնյա հեծանը գամել էր գետնին: Ողջ էին կարծես... Ուրախության արցունքներ երեվացին հարազատների աչքերին, կարծես մոռացան անմեզ զոհ դարձած Լիանային: Երկու օր ու գիշեր հայր ու դուստր տնքացին սառը հեծանի տակ ու կամաց արյունաքամ եղան: Ինչ դաժան մահ էր բաժին ընկել Գարենին: Զոհվեց նա աղջկա հետ՝ փբր կոթյան հույսը սրտում...

ԸՆՏԱՆԻՔԻՑ ՓՐԿՎԵՑ ՄԻԱՅՆ ՄԵԿԸ

ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԻՄՈՆՅԱՆԸ

ծնվել էր 1958 թվականին, Լենինականում: Սովորել է Բաֆֆու անվան (№ 32) դպրոցում, այնուհետև գուլպայի ֆաբրիկայի № 18 պրոֆտեխուսումնարանում: 1975 թ. ուսումն ավարտելուց հետո անցել է աշխատանքի նույն ֆաբրիկայի կոտտոն արտադրամասում որպես ենթավարպետ: 1976 թ. մայիսի 3-ին զորակոչվել է խորհրդային բանակ, ծառայել Գերմանիայում:

Զորացրվելուց հետո, Կարապետը աշխատանքի անցավ իր հարազատ ֆաբրիկայում և աշխատեց մինչև այն դաժան օրը: 1979 թ. նոյեմբերին նա ամուսնացել էր ԱՅԻՆԱ (ԼԱԼԱ) ՇԱՎԱՐՇԻ ԵՐԱՆՈՍՅԱՆԻ հետ՝ ծրնված 1963 թ. մայիսի 19-ին: Պիտանի սովորել էր Պուշկինի անվան (№ 6) դպրոցում: Համատեղ կյանքի բնաբանում Կարապետն ու Պիտանն ունեցան երեք երեխաներ, 1980 թ. ծնվեց Նաիրան, 1982 թ. ՀՐՈՒՇԻԿԸ: 1985 թվականին նրանք նոր բնակարան ստացան «Նոան կյուղի» բնակամասում: 1986 թ. ծնվեց նրանց աչքի զավակը՝ ՀՈՎԻԿԸ. ծրնողների ուրախությունը կրկնապատկվեց, սակայն... զոհվեցին շորսը միասին, փրկվեց միայն Նաիրան, որը գտնվում էր դպրոցում:



ՄԱՅՐՆ ՈՒ ՁԱՎԱԿՆԵՐԸ

Այս բնատանիքից միայն հայրը ողջ մնաց:

ՕՖԵԼՅԱՆ ՄԱՐՏԻՆԻ ՃՈՒՂՈՒՐՅԱՆԸ ծնվել է 1956 թվականին, Լենինականում: Սովորել է № 9 միջնակարգ դպրոցում: Ավարտել է մանկավարժական ուսումնարանը: Տնային տնտեսուհի էր և լավ մայր, հիանալի կին: Ամուսնու՝ Ժորայի հետ երեք երեխաներ էին մեծացնում ու դաստիարակում, իրենց հոգու խորքում գեղեցիկ իդեալներ ու երազանքներ փայփայելով, ապագայի լավ ծրագրեր գծելով:

Օֆելյան զոհվեց Բույվարայինի փողոցի 9 հարկանի շենքում, երբ երեխաների հետ միասին:

ԱՆՆԱ ԺՈՐԱՅԻ ԿՈՇՏՈՅԱՆԸ ծնվել է 1978 թվականին: Սովորում էր № 4 դպրոցում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԺՈՐԱՅԻ ԿՈՇՏՈՅԱՆԸ ծնվել է 1980 թվականին: Սովորում էր № 4 դպրոցում:

ՄԱՐՏԻՆ ԺՈՐԱՅԻ ԿՈՇՏՈՅԱՆԸ ծնվել է 1983 թվականին:

ԱՅՍՕՐ ԾՆՆԴՅԱՆԴ ՕՐՆ Է, ԲԱԼԵՍ

Տասնմեկը նոր բոլորած երազների ծով էիր, դստրիկս: Երազում էիր դառնալ ուսուցիչ, երգչուհի: Գրում էիր տողեր, որոնք «բանաստեղծություն» էիր կոչում: Իմ և քույրիկիդ համար աշխարհը լցված էր քեզանով: Եվ այսօր, երբ մեզ հետ չես, պաղ շիրմաքարդ սրբավայր է դարձել մեզ համար: Դրանից ենք քո կարոտն առնում ու չենք հագենում: Ամենաահավորը առանց քեզ ապրելն է, իմ սիրուն բալիկ՝ ԳԱՅԱՆԵ Ա-ԹԱՆԵՍՅԱՆ:

ՔԵԶ ՀԱՄԱՐ ՀԱՎԵՐԺ ՍԳԱՑՈՂ ՄԱՅՐԻԿ,
ՔԵԶ ԵՐԲԵՔ-ԵՐԲԵՔ ՀՈՒՇՈՂ ՀՈՒՅՐԻԿ

ԻՆՉՊԻՍԻ ՊԱՏԵԱՌ ՏՂԱՆԵՐ ՉԿԱՆ...

ԱՇՈՏ ԵՆՈՔԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ծնվել էր 1967 թ. մայիսի 12-ին, Լենինականում: Սովորել էր № 9 միջնակարգ դպրոցում: Դեռ դպրոցական տարիներից սիրում էր սպորտը, զբաղվում բոքսով, մասնակցում քաղաքային ու հանրապետական մրցումներին: Ընտացել էր բազում պարգևներ: Սիրված էր ընկերների և ուսուցիչների շրջանում:

Աշոտը դպրոցն ավարտեց բարձր գնահատականներով և նույն տարում էլ ընդունվեց Լենինականի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկական կուլտուրայի բաժին: Դեռ ուսանողական շրջանում մեկնեց խորհրդային բանակ: Լրիվ ծառայելուց հետո, զորացրվեց 1987 թ. նոյեմբերին, ապա շարունակեց ուսումը: Սովորում էր 3-րդ կուրսում, դրա հետ միաժամանակ ամուսնացավ: Առանց հարսանիք անելու, հարսին բերեցին տուն՝ հետաձգելով իրենց ապագա ուրախությունները: Վերջապես, 3 օր էր մնացել այդ մեծ ուրախությանը, որը նշանակված էր դեկտեմբերի 10-ին: Ի՜նչ ուրախ եռուզեռի մեջ էին տնեցիները, գիշեր-ցերեկ խառը գործերով տարված...

Ինչպես էր ուրախացել Աշոտի մայրը՝ Լաուրան, որը չը գիտեր և չէր էլ պատկերացնում, որ այդ ուրախությունը պետք է փոխվեր սգի՝ դառնար կորստյան անմոռ ցավ...

Այդ չարաբաստիկ օրը, հենց երկրաշարժը սկսվելու պահից, Աշոտը փախել էր մանկավարժականի բանասիրական ֆակուլտետից: Այնտեղից փըրկվելով, նա մնաց քաղաքի շենքի փլվածքների տակ: Շենքի մոտ նա օգնության էր հասել մի կնոջ և նրա հետ զոհվել տեղում: Այսօր նրա կորստյան վիշտը խորն են ապրում ոչ միայն ծնողներն ու հարազատները, այլև այդ կնոջ հարազատությունը, Աշոտի ամբողջ կուրսը:

Կարճ ժամանակամիջոցում սպիտակեցին ջահել մոր՝ Լաուրայի մազերը, զավակի կորստյան վիշտը կրելով, նա չի կարող դանում հաշտվել կյանքի հետ:

1989 թ. ապրիլի 3-ին ծընվեց Աշոտի աղջիկը՝ Գայանեն, բայց հայրը չտեսավ իր փոքրիկ աղջկանին: Այսօր ողջ է մայրը՝ Կարինեն, որն ամեն ինչ անում է և մտադիր է անել՝ սփոփելու իր երեխային, որ Գայանեն անհոգ մեծանա:

ՆԱԽԱԶԳԱՑՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՂԱՐԾԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ այնպես բուռն էր սիրում կյանքն ու բնությունը: Արշալույսն ու մայրամուտը, ծաղկած խընձորենին, գարնան շնչից նոր արթնացած ձնծաղիկը, բնության գեղեցկությունները նա ընկալում էր որպես հրաշք, որպես սուրբ հրաշագործություն: Մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր: Համեստ էր ու աշխատասեր, ուսումնատենչ: Ղարաբաղյան շարժումը ոգեշնչել էր Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղի մեխանիկական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողին: Հաճախակի էր մասնակցում Թատերական հրապարակում կայացած հանրահավաքներին: Հազար-հազարների հետ նրա ձեռքերն էլ էին բռունցքվում վերև՝ արտահայտելով միաբանությունը արցախահայերի հետ, բողոքն ու ցասումը՝ անարդարության, վրեժն ու ատելությունը՝ Սումգայիթի ոճրագործների դեմ:

Վայելում էր համակուրսեցիների, դրկիցների, ընկերների, բարեկամների սերն ու համակրանքը: 18 տարեկան պատանու սրտում հազար ու մի տենչ ու կարոտ, հույս ու երազանք կար, նաև՝ նոր բողբոջած սեր... Անհուն էր նրա սերը նաև ծնողների, երկու քույրերի հանդեպ:

1988 թ. դեկտեմբերի 6-ի գիշերը, երբ մայրը՝ բանվորուհի Սեդա Հարությունյանը, պատմում էր նախորդ օրվա ծանր երազը, թե ինչպես երկրի ընդերքից հեղեղ ելավ, քշեց ընտանիքի անդամներին, տարավ, նա ասաց՝ ինչ որ լինելու է, թող ինձ հետ լինի, թող հեղեղը միայն ինձ տանի, միայն թե ձեզ, իմ քույրերին ոչինչ չպատահի...Ճակատագրական կանխագուշակում չէ՞ր արդյոք: Հաջորդ օրը՝ այն անավոր դեկտեմբերի 7-ին, աշխարհակործան արհավիրքի սև «հեղեղը» եկավ, տարավ նաև Հարություն Հարությունյանին: Պոլիտեխնիկական ինստիտուտի փլվածքների տակ մնացին նրա հույսերն ու երազանքները, առաջին սերը: Հարությունի ոգին համբարձվեց երկինք, անչզրություն,հայոց հողին մընացին նրա թողած հիշատակները, անմեռ երազանքները, որոնք, հնարավորին չափ պետք է իրագործենք մենք՝ ապրողներս, նրա հարազատներն ու մերձավորները:

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԻՍԱՏ ԹՈՂՆԵԼՈՎ ԲՈԼՈՐ ԵՐԱԶԱՆՔՆԵՐԸ

ԱՐՋԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ ծնվել է 1968 թվականի մայիսի 1-ին, Լենգէս գյուղում: 1984-85 ուստարում ավարտել է Վարդենյաքի շրջանի Վարդենիսի միջնակարգ դպրոցը գերազանց գնահատականներով: Լինելով ուշիմ և բանիմաց, Արզինը 1985 թվականին ընդունվեց Լենինականի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետը: 1986-ի մայիսին զորակոչվեց բանակ և իր զինվորական ծառայությունն անցկացրեց Բաքվում: 1988-ի փետրվարին ուղարկվեց Սումգայիթ և ներկա եղավ դաժան կոտորածին, որը հոգեպես և ֆիզիկապես մաշել էր զգայուն երիտասարդի սիրտը: 1988-ի մայիսին զորացրվեց և սեպտեմբերից հաճախեց դասերին (սովորում էր 2-րդ կուրսում):

Շատ ուսանողների հետ Արզինն էլ էր մասնակցում դարաբաղյան շարժման խաղաղ ցույցերին: Լինելով շնորհալի երիտասարդ, Արզինը սիրված էր շրջապատի և կուրսեցի ների կողմից:

Թ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
մանկավարժ

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳԻ ՕՅՆՈՅԱՆ

Ծնվել է Լենինականում, 1977 թ. մայիսի 9-ին: Սովորում էր 23-րդ դպրոցի 5-րդ դասարանում: Սովորում էր գերազանցությամբ, բայց նրա տարերքը նկարչությունն էր: Նկարչուհի ուսուցչի խոսքերով նա ապագայում անպայման նկարիչ կդառնար:

Աղետի օրը Լիլիթի՝ քրոջ հետ, տանն էին, պատրաստվում էին գնալու դպրոց: Երեք օր հետո նրանց հանեցին ողջ՝ Սիսիանից եկած փրկարարների օգնությամբ: Երբ Արմանին հանում էին փլատակների տակից, նա պահանջեց, որ սկզբից քրոջը հանեն, հետո իրեն: Տեղափոխեցին Երևանի 3-րդ մանկական հիվանդանոց... անդամահատեցին աջ ոտքը... չդիմացավ...

3 ՕՐ ՓԼԱՏԱԿՆԵՐԻ ՏԱԿ ՀԻՇՈՒՄ Է ՔՈՒՅՐԸ

Լիլիթ չվախենաս, զգում եմ, որ պապան մեզ անպայման կգտնի:

ԼԻԼԻԹ.— Արման ի՞նչ ես անում:

ԱՐՄԱՆ.— Ոտքերս չեմ կարող շարժել...

ԼԻԼԻԹ.— Արման, շատ եմ ուզում ուտել ու ջուր խըմել:

ԱՐՄԱՆ.— Դիմացիր...Ենթադրենք, որ Արցախի համար հացադուլ ենք հայտարարել:

ԼԻԼԻԹ.— Կարո՞ղ է թուրքերն են հարձակվել մեր քաղաքի վրա:

ԱՐՄԱՆ.— Ոչ, սա շատ ուժեղ երկրաշարժ էր: Շենքը որ լավ սարքած լիներ, չէր փլվի... Ճապոնիայում միշտ երկրաշարժ է լինում, բայց ոչ մի շենք չի փլվում...

ԱԼԲԵՐՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(Հատված պոեմից)

ԱՐԹՆԱՅԻՐ, ԳՅՈՒՄՐԻՍ...

(Սկիզբը՝ «ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ» № 21-ում)

Դեռ հինգին, վեցին սև դեկտեմբերի:
Ախր երազը քարից չի ծնվում,
երազը հոգու կանչն է տեսլական,
Հոգի-բնություն մեկտեղ են ապրում,
Կենսակայան է հոգին գոյության
Զգացումների խրթին մանվածքով,
Գալիքն զգալու հոգեթելերով,
Որ նշմարելով գաղտնագործում է
Ամեն տեսակի չպատված գալիք,
Վանում մեզանից ամեն չարություն՝
Սև ու սգավոր:
Հարցնում եմ ես
Զգացողները ինչո՞ւ լռեցին...
...Արխանգելսկում ապրող գյումրեցին,
Հեռավո՞ր այնքան,
երեք օր առաջ
Աղետը զգաց.
երազով միայն...

***

Անցածն՝ անցավոր...
Բավ է, ինչ եղավ.
Արքնացի՛ր, Գյումրիս,
Արքնացի՛ր նիրհից քո մահատեսիլ,
Ու զոտեպնդվիր,
Դարձիր կողմնակից խինդ ու խանդանքի,
Դարձիր ուղեցույց՝
Մեր կերտումների ու մեր արարման,
Որպես ապացույց՝
Հարատևության ու լինելիության,
Սգահան եղիր ինքդ քո կամքով
Ու վանիր ինքդ քեզանից ամպերը մռայլ
Եվ ապրիր նորից առաջվա ճնքով
Ու հիշիր վարդ, երգդ սիրավառ՝
«Վաց միլ էդեն իմ ախպրատանք,
Լացը նորեն լաց կրերե,
Արի հիշում մենք էլ խնդանք,
Սուգ, շիվանը ցավ կրերե...»:
Հիշիր, դու խոսքը ուստա Թաքոսի
Խորունկ խրատը նրա մեծավոր,
Ասում էր՝ «Ցավը բե անբեղ էդնի,
Էնիկ կդառնա կրակ ծխավոր.
Տղամարդն էն է, որ հիշում գոլա,
Հրմը մեկել որ իր գործին կէրբա,
Արտը կվարե, ցորեն կցանէ,
Ապրողի համար ապրուստ կշինե»:
Հիշի՛ր, իմ Գյումրիս,
Իմ հոգյակս,
Անցավորներին, զոհերին քո բյուր
Ապրելով հիշիր,
Իմացիր նաև
Որ մեռածները
Կարող են ապրել
Ապրողների հետ.
Դու երաշ հիշիր,
Որ տիրամայր է,
Հրաշք տիրամայր,
Թեև վիրավոր,
Թեև սգավոր,
Նա զրկվել է
Զույգ մանկիկներից
Ու ոտքերից զույգ,
Բայց և ապրում է,
Այդպես ապրելով
Վրեժ է լուծում
Անեղ Աղետից:
Արմենուհի է անունը նրա,—
Տոհմից՝ Նիկողոսյան,
Օգնիր, հոգյակս, որ նա էլ ժպտա,—
Տիրամայրը մեր ու նմանակը
Մեր արմենական,
Որ հազար անգամ վիրավորվելով
Ապրում է էլի
Ու պիտի ապրի...

***

Դառնանք ու հիշենք
Ու նաև սրտով, ախ անենք, հիշենք
Որ հիմա չկան, այդ մարդիկ չկան
Եվ ապրելու են հիշվելով միայն,
Սերնդե-սերունդ ձգվող հուշերում:

1986-1989 թթ.

Գ. Հառիճ

ԴԵՄԻՐՃՅԱՆՆԵՐԸ

Աղջկա՝ Օվսաննայի հետ շատ էր կապված ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՊԻՍԻ ԴԵՄԻՐՃՅԱՆԸ (ծնվել է 1955 թվականի հունվարի 5-ին), միշտ նրա հետ զբոսնում էր: Դեկտեմբերի 5-ին արձակուրդ տվեցին, չնայած չէր ուզում. պատրաստվում էին նշելու նոր տարին: Տոնածառ և խաղալիքներ էր գնել ժամանակից այնքան շուտ, ու ուրախանում էր երեխաների հետ, բայց...

Դեկտեմբերի 7-ի առավոտյան կնոջը և երեխաներին ճանապարհ դրեց երկար և մտազբաղ հայացքով: Վարորդ էր Հարությունը, ընտանիքին նվիրված, ընկերասեր: 4 ամիս էր, ինչ նոր բնակարան էր ստացել Երևանյան խճուղու № 5 «Բ» շենքում:

ՄԱՐԻԱՄ ԿԱՐՊԻՍԻ ԴԵՄԻՐՃՅԱՆԸ ծնվել է 1958 թվականի հոկտեմբերի 20-ին: Սովորել է № 18 դպրոցում, ապա ընդունվել պոլիտեխնիկական ինստիտուտ, որն ավարտել է գերազանց գնահատականներով: Գուլպեղենի արտադրական միավորումում տասնամյա աշխատանքային վաստակ ուներ:

Կյանքով լեցուն էր, ուրախ ժպիտը անպակաս էր դեմքից: Ընկերասեր և կատակասեր, մաքրասեր բնավորությամբ: Երեքն էլ նման էին միմյանց: Ամուսնացած չէր և եղբոր ընտանիքով էր ուրախանում: Տիրապետում էր կար ու ձևի:

ԲՅՈՒԶԱՆԴ ԿԱՐՊԻՍԻ ԴԵՄԻՐՃՅԱՆԸ ծնվել է 1960 թվականի հունիսի 15-ին: Մասպել է Խաբարովսկում: Եղբավարպետ էր աշխատում գուլպեղենի արտադրական միավորումում: Երկրաշարժի օրը նոր էր վերադարձել 3-րդ հերթից, հանգստանում էր:

Մարիամին և Բյուզանդին գտան շքամուտքի մոտ, ջախջախված...

ОБРАЩЕНИЕ
К НАСЕЛЕНИЮ И ТРУДЯЩИМСЯ
ГОРОДА ЛЕНИНАКАНА

Дорогие товарищи!
Трудящиеся города Ленинакана!
Крупнейшие землетрясения произошли сегодня утром. [illegible]
[illegible] разрушены предприятия, учреждения, школы, больницы и другие объекты. [illegible]
военнослужащих особого района г. Ленинакана выражаю соболезнование [illegible]
пострадавших. Всеми гарнизонными предприятиями принимаются решительные меры по ликвидации [illegible]
всей трагедии и поддержанию порядка в городе.
К сожалению, в это тяжелейшее время в г. Ленинакане отдельные граждане совершают [illegible]
антиконституционные деяния.
В целях гарантирования безопасности граждан, обеспечения нормальной работы по ликвидации последствий землетрясения в городе Ленинакане и прилегающих к нему районах с 24.00 часов 11 декабря сего года вводится комендантский час, [illegible]
который предусматривает:
1. Ограничить въезд в город Ленинакан всем лицам, не проживающим на территории в городе, за исключением специально-командированных и личного транспорта, с грузами необходимых для ликвидации последствий землетрясения.
Организованы контрольно-пропускные пункты въезда в город.
2. С 22.00 до 6.00 прекратить свободное передвижение граждан по всему городу, за исключением лиц, имеющих специальные пропуска.
3. Запретить сбор лиц, не участвующих в разборе завалов, мешающих работе спасательных, аварийно-восстановительных бригадам.
4. Запретить перестановку, а так же самовольное распределение технических средств, работающих на объектах (кроме наших спасательных бригад).
5. Задерживать лиц, занимающихся мародерством, воровством, грабежами и разбоем.
6. Все местные органы государственной власти, государственные и общественные организации, предприятия обязаны оказывать всяческое содействие военному коменданту в обеспечении общественного порядка в безопасности.
7. За невыполнение распоряжений и приказов военных и местных органов власти виновные будут привлекаться к административной и уголовной ответственности согласно действующему законодательству. За сопротивление администрации комендантского часа, а так же попытку мародерства будут применяться самые решительные меры.
Товарищи!
Граждане и жители города Ленинакана!
Это вынужденные меры предпринимаются суровой необходимостью и направлены на защиту наших интересов, прав и достоинства советских граждан.
Мы призываем вас к спокойствию, проявлению выдержки, взаимному уважению друг к другу и безусловному выполнению задач по ликвидации последствий землетрясения, строгому выполнению положений комендантского часа.

Военный комендант особого района г. Ленинакана
генерал-лейтенант Ю. Кузнецов.

ՆԱՀԱՏԱԿՎԵՑ ՍՊԻՏԱԿ ԽԱԼԱԹԸ ՀԱԳԻՆ

1924 թվականի դեկտեմբերի 23-ին, ծառայողի ընտանիքում ծնվեց ԱՄԱԼՅԱ ՄԸԿԸՐՏՉԻ ՄԿՐՏՉՅԱՆԸ: Կյանքի նպատակը իրականացնելու համար ընդունվեց բժշկական ինստիտուտի ստոմատոլոգիական բաժին: Աշխատանքային առաջին մկրտությունը ստացավ Երևանի կենտրոնական ստոմատոլոգիական պոլիկլինիկայում: Բազում հիվանդներ... Եվ բոլորն էլ իրենց գոհունակությունը էին հայտնում նորավարտ ատամնաբույժին:

1956 թվականից աշխատեց Լենինականի № 1 բուժմիավորումում, իսկ 1981 թվականից տեղափոխվեց ստոմատոլոգիական պոլիկլինիկա, մինչև դժբնդակ երկրաշարժ՝ այդ պոլիկլինիկայի կոշիկի ֆաբրիկայի առկայում:

Ամալյան սիրում էր իր աշխատանքը, որը նրա համար հոգեկան մեծ բավարարվածություն էր: 1972 թվականի հունիսի 18-ի համարում «Բանվոր» թերթը «Աշխատանք. սքանչանք և մարդասիրություն» խորագրով հոդվածում Ամալյայի մասին գրել է. «Նա հավասարապես հոգատար է բոլորի հանդեպ, զգայուն ու մարդասեր: Բուժում է ոչ միայն գիտելիքներով ու փորձով, այլև վերաբերմունքով ու խոսքով»:

Ամալյան դեռ շատ անելիքներ ուներ, դեռ շատ հիվանդներ կբուժեր, եթե չլիներ ավերիչ երկրաշարժը, որը վերջ կետ դրեց նրա կյանքին: Նրան գտան փլատակների տակ, բազում նահատակների կողքին, սպիտակ խալաթը հագին:

ՎԱԼՅՈՒՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ՝ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օտարերկրյա կազմակերպությունների և արտասահմանյան քաղաքացիների համար, ինչպես նաև ԽՍՀՄ այն կազմակերպությունների ու քաղաքացիների համար, ովքեր վալյուտային հաշիվներ ունեն և ցան կանում են Հայկական ԽՍՀ-ում տեղի ունեցած երկրաշարժից տուժածներին օգնություն ցույց տալ օտարերկրյա վալյուտայով, ԽՍՀՄ արտաքին տնտեսական բանկի Երևանի քաղաքային վարչությունում գործում է վալյուտային հաշիվ, որի համարն է 07000001:

ՎԻՇՏԸ ...

Լուսանկարը՝ Վ.Կոտովի

ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԽՐՈՆԻԿԱ. ՈՎՔԵ՞Ր ԵՆ ...

Դեկտեմբերյան աղետի խառն օրերին մեր հայաքաղաքացիները գտնվում էին շոկի վիճակում և անկասկած չէին կարող սթափ, ամեն ինչ նկատող հայացքով տեսնել ամեն բան, և քանի որ ցավն ու կսկիծը միայն իրենցն էր, յուրաքանչյուրը տապակվում էր իր ցավով:

Ովքե՞ր են այն դեկտեմբերյան օրերին եղել մեր քաղաքում: Այս հարցին այժմ դյուրին կերպով հնարավոր չէ պատասխանել: Եվ ո՞վ կարող է ասել, թե ովքեր եկան ու գնացին: Բայց ահա բաթելոնյան այդ խառնակ օրերի այս մի լուսանկարը, (որի հեղինակը մեր ընթերցողին դեկտեմբերյան օրերի շատ լուսանկարներից ար դեն վաղուց հայտնի պերմցի Վ. Կոտովն է), հարյուրի հասնող կադրերի հետ դարձել է մեր թերթի սեփականությունը: Վ. Կոտովի այս լուսանկարի հետևում կարդում ենք «Ադրբեջանցիներ» մակագրությունը: Ակնհայտ է, որ նման մակագրությունը ինքնահնար չէ, անշուշտ, հեղի նակը հետաքրքրվել է, իսկ աղետյալ քաղաքի հյուրերը չեն խուսափել ռուս լուսանկարչին խոս տովանելուց: Եվ ահա մեզ նոր միայն հայտնի է դառնում, որ քաղաքում այնուամենայնիվ եղել են ադրբեջանցի մեր «հարևանները»: Եվ հիշում ենք, թե ինչպես այդ օրերին Հայաստանի ժուռնալիստների միությունում հարյուրավոր հեռագրեր էին գալիս այդ նույն հարևաններից, որոնք իրենց խնդությունն ու ցնծությունն էին հայտնում մեր վշտի առթիվ, փառաբանելով իրենց ամենազոր ալլահին:

Ահա նստած են էլեկտրական վառարանի շուրջը նրանք, մեր «հարևանները»: Բոլորի գլուխն ու կախ են, ասես ամաչում են պարզ ճակատ օբյեկտիվին նայել: Ամասիայի նախկին բնակիչնե՞ր են, թե՞ բոլորովին պատահական մարդիկ, հայտնի չէ: Այդ մասին ոչինչ չես կարող ասել: Սակայն մի բան պարզ երևում է. նրանք օգնելու չեն եկել: Տանք մեր «Հիշողություն» թերթի հիշողությանը այս լուսանկարը ևս: Կգան նոր ժամանակներ, կփոխվեն մարդկանց հարաբերությունները և տա աստված, որ դեպի լավը, որպեսզի նման դրկցի կողքին ապրողների խիղճը հանգիստ լինի: Գուցե դեռ նրանք կանգնելով հայոց հողի վրա՝ ընդունակ լինեն պարզճակատ նայելու լուսանկարչական օբյեկտիվին: Ոչ այսպես, ինչպես այս նկարում՝ մեղավոր կամ ամաչելով:

Լուսանկարները՝ Վ. ԿՈՏՈՎԻ

ՄԱՄՈՒԼԻ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ

Հունվարի 5-ին փլատակների վերացման ժամանակ երկրաշարժի նոր զոհեր չեն հայտնաբերվել: Հիվանդանոցներում մահացու վախճան չի արձանագրվել: Հիվանդանոցներից դուրս է գրվել 128 մարդ: Բուժումը շարունակում է 2952 մարդ:

Էվակուացման կարգով հանրապետությունից դուրս են բերվել ևս 946 երեխա, կանայք ու ծերեր: Նրանք բոլորը տեղավորվել են հանգստյան տներում և սանատորիաներում: Համաճարակային իրադրությունը աղետի գոտում հանդարտ է մնում:

Շարունակվում է դրամական օգնության ստացումը: Ըստ հանրապետական կառավարական հանձնաժողովի տվյալների, անցած օրվա ընթացքում այն աճել է 34 միլիոն ռուբլով: Արտասահմանից ստացվել են ազատ կոնվերսիայի ենթարկվող 608,5 հազար արտասահմանյան վալյուտային ռուբլի և 614,5 հազար՝ արտասահմանյան այլ վալյուտաներով:

Տուժվածների համար բեռներով կատարվել են ԽՍՀՄ քաղաքացիական ավիացիայի միջազգային 14 և օտարերկրյա ավիաընկերությունների երեք թռիչքներ: Աճում է տեխնիկական օգնությունը տուժած շրջաններին: Երեկ ստացված մեխանիզմների հաշվառմամբ այստեղ կենտրոնացած են 1464 ամբարձիչ, 838 բուլդոզեր, 502 էքսկավատոր, 4469 ավտոմեքենա:

Երկաթուղում գործերի վիճակի նկատմամբ պահանջկոտ վերահսկողությունը թույլ է տվել էական տեղաշարժեր ապահովել վագոնների բեռնաթափման գործում: Հունվարի 5-ին երկաթուղագիները բեռնաթափման էին ներկայացրել ընդհանուր առմամբ 2323 վագոն (և հաստատում են, որ 2200-ից պակաս չի ներկայացվելու): Ազատվել է շարժակազմի 1751 միավոր: Հաջողվել է զգալիորեն «ընդլայնել» երկու նեղ տեղեր՝ նիկիրատվական բեռներինը Լենինականում և ցիստեռներինը, որոնք բեռնաթափվում են ավելի օպերատիվ կերպով: Վատ չի ընթացել տնակների բեռնաթափումը, որոնք այնքան անհրաժեշտ են առայժմ վրաններում ապրող բնակչությանը: Այս ամենը հնարավորություն է տալիս առաջ մղել շինարարների ու նրանց տեխնիկայի, կոնստրուկցիաների, նյութերի շարժակազմերը, այն հաշվով, որ հունվարի 10-15-ից նրանց մի մասն սկսի շենքերի կառուցումը:

ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնաժողովի հերթական նիստում հիմնականում հավանության են արժանացել հանրապետության ավտոճանապարհների ու ավտոտրանսպորտի ու մինիստրության ձեռնարկած միջոցները և հետագա պլանները, մինիստրություններ, որոնց դերը վերականգնման աշխատանքներում մեծանալու է:

Այդ նույն օպերատիվ խորհրդակցությունում լսել են մի շարք այլ մինիստրությունների ու գերատեսչությունների ղեկավարների: Նրանց ծրագրերի քննարկման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել սոցիալական հարցերին՝ բնակարանների շինարարության, առևտրական և հասարակական սննդի ցանցի ծավալման տեմպերին: Ոչ հստակ պլանավորման համար լուրջ դիտողություններ են արվել ծառայությունների ոլորտի ղեկավարությունը:

Վերականգնման աշխատանքների կազմակերպման ընթացքում անհրաժեշտ կլինի ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվների զգալի մասը ժամանակավորապես օգտագործել շինարարական օբյեկտներում: Հանրապետություն են գործուղված շինարարական գործի արագ ուսուցման մեթոդներին տիրապետող բավարար քանակությամբ մասնագետներ, որոնց օգնության վրա պետք է հենվել անհապաղ:

ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի ինֆորմացիայի բաժնի մամուլի կենտրոն

6 հունվարի 1989 թ.

ՈՐՏԵՂԻ՞Ց ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

Մեր համամաղամացի ներ Կ. Զաքարյանը, Մ. Գրիգորյանը և Ս. Սաֆարյանը գրում են՝ «Մենք ուզում ենք ձեռք բերել և հետագայում կազմել «Հիշողության» բոլոր համարները:

Ո՞ւրեղի՞ց կարելի է ձեռք բերել դրանք»:

Տեղեկացնենք, որ «Հիշողության» բոլոր համարները վաճառվում են «Կումայրի» Թերթի խմբագրության կոմիսիոն կրպակում, որը գտնվում է Կիրովի փողոցի եկրամասում՝ կանգառի մոտ:

Ն. Զազյանը և Պ. Մանուկյանը հարցնում են. «Քաղաքի գրեթե բոլոր գրախանութներում եղել ենք, սակայն արձակագիր Հովհաննես Մելքոնյանի «Քարոզարան» գիրքը չենք տեսել:

Այն ո՞ւրեղի՞ց կարելի է ձեռք բերել»:

«Քարոզարանը» վաճառվել է կոլեկտիվ հայտերով և այժմ մնացածը (սահմանափակ քանակով, շուրջ 200 օրինակ) վաճառվում է «Կումայրի» Թերթի խմբագրության կոմիսիոն կրպակում:

Եվ Թերթի, և գրքի գները անփոփոխ են, բացառությամբ պրեֆերենցիալ 5 տոկոսի:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այն համաքաղաքացիները, որոնք լուսանկարներ և կենսագրական տվյալներ են հանձնել «Առաքելություն» կազմակերպությանը՝ «Հիշատակի» գրքի համար և ցանկանում են, որ դրանք տպագրվեն «Հիշողություն» շաբաթաթերթում, մինչև գրքի տպագրության կազմակերպումը կարող են տեղյակ պահել խմբագրությանը կամ անձամբ ներկայացնել տպագրության:

«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԿՈՒՄԱՅՐԻ ՔԱՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՄԱՅԻՍՅԱՆ Փ. 47